# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-113
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «04» «03» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի պարտականությունները կատարող Գ. Սարգսյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել «Հովեր» պետական կամերային երգչախմբի հիմնադրման և գործունեության 30-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման ծախսերին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 3-ի N 359-Ա/2 հրամանով հաստատված ծրագրի և սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծախսերի նախահաշվի (Հավելված):

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.1.1. Հատկացնել գումարը «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

***2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

***2.3. Կատարողը պարտավոր է՝***

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

**2.4. *Կատարողն իրավունք ունի՝***

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 15360,2 հազար (տասնհինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար երկու հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով

սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Ծրագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները չեն կարող ներառվել 02.02.2022 թ. դրամաշնորհի տրամադրման N ՄԾԴ-65 պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝ օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի մարտի 16-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի ապրիլի 16-ը:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը

շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

## 10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 5 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

## 12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ |
| Երևան, Վ. Սարգսյան 3 | Երևան, Իսահակյան 1 |
| Կառավարական տուն N 2 | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | h/h 900018001736, հվհհ 01573197 |
| h/h 900011032878, հվհհ 02698732 | հեռ. 010583353 |
| Պատվիրատուի ստորագրությունը | Կատարողի ստորագրությունը |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրենի պարտականությունները կատարող՝ |
| ---------- Գ. Սաֆարյան | ---------- Գ. Սարգսյան |
| Կ. Տ. | Կ. Տ. |

Հավելված
«04» «03» 2022 թ.
N ՄՇՊ 113 պայմանագրի

## ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հովեր» պետական կամերային երգչախմբի հիմնադրման և գործունեության 30-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման ծախսերի

| N | Ծախսատեսակի անվանումը | Միավոր | Քանակ | Միավորի արժեքը (դրամ) | Գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)* | | | | 952.0 |
| | Նախագծի համակարգող | մարդ | 1 | 150000 | 150.0 |
| | Լուսանկարչի ծառայություններ | օր | 7 | 36000 | 252.0 |
| | Գրաֆիկ դիզայների ծառայություններ | հատ | 1 | 250000 | 250.0 |
| | Էջադրման ծառայություններ | հատ | 1 | 100000 | 100.0 |
| | Մոնտաժի և գունամշակման ծառայություններ | հատ | 1 | 200000 | 200.0 |
| 2 | Լուսավորման տեխնիկայի տրամադրում և սպասարկում (3 օր)<br>(դիմային լուսավորման սարք՝ 7 հատ, RGB LED լուսային սարքավորում՝ 30 հատ մետաղական կոնստրուկցիա՝ 8 հատ, LED WASH SV՝ 8 հատ, մետաղական կոնստրուկցիա (LED WASH-ի համար)՝ 2 հատ, թատերական լուսային սարք (750 -1000 wtt)՝ 4 հատ, սնունցող սարք՝ 1 հատ, լուսային ղեկավարման վահանակ՝ 1 հատ, լուսավորման դիզայն, ծրագրավորում, իրականացում, մոնտաժային եւ տեխնիկական աշխատանքներ, տրանսպորտային ծախսեր) | ծառայություն | 1 | 5084200 | 5084.2 |
| 3 | Պրոյեկցիոն համակարգի տրամադրում և սպասարկում (2 օր)<br>(պրոյեկցիոն համակարգի տրամադրում (այդ թվում՝ պրոյեկտորներ, մեդիասերվեր, կոմուտիկացիաներ), պրոյեկտորների աշխատանքի նախագծում, սպասարկում.Պրոյեկտորները կա՛մ 3, կամ 6 հատի համադրումով (2 հատ՝ Nec PA853w, 4 x Nec PA703wn) կախված վերջնական բեմադրական լուծումներից, ներառյալ տեխնիկական միջոցները, աշխատանքը, հարկերը) | ծառայություն | 1 | 3150000 | 3150.0 |
| 4 | Ներկայացման ձայնագրման, համահնչեցման և համադրման ծառայություն<br>(Ձայնագրման համար նախատեսված առդիոտեխնիկա (միկրոֆոն Neumann km 184- 4 հատ, միկրոֆոն Neumann tlm 103- 2 հատ, միկր Shure 81- 4հատ, Soundcard Rme fireface 800 2 հատ, Apple Macbook pro i7-2հատ, միկրոֆոնի ստենդ՝ 3 հատ, ականջակալներ),ձայնագրվելիք նյութի տեւողությունը՝ 50-60 րոպե) | ծառայություն | 1 | 440000 | 440.0 |
| 5 | Տեսանյութի նկարահանման և մոնտաժի ծառայություն (2 տեսանյութ) | ծառայություն | 1 | 650000 | 650.0 |
| 6 | Բեմական հագուստի պատրաստում<br>(նյութը՝ ատլաս, դեռալների նյութը՝ շապել մեշկավինա, ռեգին, թել, այլ աքսեսուարներ) | հատ | 27 | 37000 | 999.0 |
| 7 | Բեմական ծածկույթի (162 քմ) տրամադրում և սպասարկում | օր | 4 | 125000 | 500.0 |
| 8 | Հոբելյանական կատալոգի տպագրություն (30-50 էջ. գունավոր տպագրություն) | հատ | 150 | 4500 | 675.0 |
| 9 | Հանրահռչակման ծախսեր (առցանց գովազդ) | հատ | 1 | 80000 | 80.0 |
| | Գովազդային, տպագրական ծախսեր<br>(բաներ մեծ՝ 1 հատ-32,0 հ. դ., բաներ միջին՝ 1 հատ- 20,0 հ. դ., ազդագիր՝ 25 հատ 20,0 հ. դ., ծրագիր՝ 500 հատ-150,0 հ. դ., հրավիրատոմս՝ 160 հատ- 48,0 հ. դ.) | փաթեթ | 1 | 270000 | 270.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 12800.2 |
| | ԱԱՀ՝ | | | | 2560.0 |
| | ԱՄԲՈՂՋԸ | | | | 15360.2 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/hh 900011032878, հվhh 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
«Կամերային երաժշտության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Դիսանակյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018001786, հվhh 015 3197
հեռ. 010563353
Կատարողի ստորագրությունը
Տնօրենի պարտականությունները կատարող՝
Գ. Խաչատուրյան
Կ. Տ.